Հաստատված է՝
Արթիկի պետական քոլեջի
կոլոգիալ կառավարման խորհրդի
նախագահ՝ _____
«_31_» _____08_____ 2021 թ.

ԿԱՐԳ

ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

Բողոքարքման կարգը ուղղված է ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքների գնահատման /գնահատականի / վերաբերյալ: Ուսանողը պետք է գիտակցի ստացած գիտելիքի գնահատման անհրաժեշտությունը, որն ուղղված է նրա կողմից ձեռք բերած ուբակությունները բացահայտելուն : Ուսանողների ունակությունների գնահատումը պետք է լինի առավելագույնս հստակ և թափանցիկ : Դասավանդողը պարտավոր է ուսանողին տեղեկացնել և ծանոթացնել դասընթացին ուղղված գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին : Դասավանդողը պարտավոր է օբյեկտիվ գնահատել ուսանողներին՝ ըստ ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների և ապահովել ուսանողին անհրաժեշտ տեղեկատվությամբ : Գնահատման համակարգը պետք է ապահովի ուսանողի գիտելիքների օբյեկտիվ գնահատումը : Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար քոլեջում սահմանվում են ընթացիկ հարցումներ, քննությունների գրավոր և բանավոր ձևեր : Ուսանողը պետք է հստակ տեղեկացված լինի գնահատմանը ուղղված իր իրավունքներին և պարտականություններին .

-տեղեկացված լինի գնահատման սկզբունքներին և ձևերին,

-իմանա գնահատման բոլոր բաղադրիչները,

-իմանա յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը ընդհանուր գնահատականի վրա : Ուսանողը գնահատվում է ըստ առարկայի համար սահմանված գործոնների, որոնցից են՝ ակտիվության դասերին, կատարած անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարողականը, կիսամյակային և վերջնական քննությունները :

Քննող դասախոսը կամ քննական հանձնաժողովը պարտավոր են ուսանողների գիտելիքների գնահատումը կազմակերպել և իրականացնել օբյեկտիվ և թափանցիկ ձևով : Ուսանողի կողմից գրագողության փորձ անելու դեպքում չեղյալ են համարվում քննական տետրում կատարած գրառումները : Վերջնական գնահատականի հիմքն են հանդիսանում բոլոր բաղադրիչներով հավաքված միավորները :

1.Ուսանողը իր գնահատականից բավարարված չլինելու դեպքում իրավունք ունի այն բողոքարկելու կարող է բողոքարկել անհատական և ինքնուրույն աշխատանքների, կիսամյակային քննությունների գնահատականը :

2.Ուսանողը բողոքարկման իրավունք ունի՝

- եթե գնահատումը ոչ օբյեկտիվ է,

- եթե դասավանդողի կողմից կատարվել է գնահատման անհստակություն,

-գնահատողը չունի բավարար փորձ և հմտություն ուսանողին գնահատելու համար:

3.Գնահատականով չբավարարված ուսանողը կարող է դիմել ուսումնական գծով փոխտնօրենին՝ նրա գիտելիքները հավելյալ գնահատելու խնդրանքով :

4.Գրավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող բողոքարկումը պետք է անձամբ ներկայացնի գրավոր տեսքով ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելուց մեկ օր հետո :

5. Բանավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող, առանց լսարանից հեռանալու, իրավունք ունի խնդրել քննասենյակ հրավիրել ուսումնական գծով փոխտնօրենին և տվյալ ամբիոնի վարիչին՝ գնահատման վերաբերյալ բողոքարկում ներկայացնելու համար :

6.Բողոքարկման դեպքում ուս. գծով փոխտնօրենի կողմից ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով : Բողոքարկման հանձնաժողովը նորից ստուգում է ուսանողի աշխատանքը և լսում ուսանողի կողմից առարկային վերաբերով թեմաների ներկայացումը :

7.Բողոքարկումը և գնահատումը հանձնաժողովի կողմից պետք է լինին օբյեկտիվ և թափանցիկ: Արդյունքում գնահատականը կարող է ինչպես բարձրացվել , այնպես էլ իջեցվել կամ թողնել առանց փոփոխության :

8.Հանձնաշողովի կողմից նշանակված գնահատականը վերջնական է : Այն նշանակվում է առանձին ուղեգրի մեջ և կցվում ընդհանուր քննական թերթին, հավելյալ նշվում է կատարվում ստուգման գրքույկում : Կազմվում է բողոքարկման հանձնաժողովի արձանագրություն :

9. Բողոքարկումը չեղյալ է համարվում եթե՝

-դիմումի մեջ շոշափված են ,,Արթիկի պետական քոլեջի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգի,, և գնահատման չափանիշների հետ կածված հարցեր :

-դիմումի մեջ ուսանողը պատճառաբանում է իր առողջական խնդիրները :

10. Ամփոփիչ ատեստավորումից ստացած գնահատականի բողոքարկումն իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2011թ-ի հոկտեմբերի 31-ին N 1197-Ն հրամանով հաստատված ,, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի ,, 33-րդ կետի :